«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առարկա՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

Հետազոտող ուսուցիչ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԼԻԿ ՍՈՍԻ

Ուսումնական հաստատություն՝ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 132 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Լեզվական կարողությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում.....5

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝որպես ուսուցչի առաջնային նպատակ.....12

ԳԼՈՒԽ. 2 ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 «Имя существительное» թեմայի ուսուցումը 5-րդ «ա» և 5-րդ «բ» դասարաններում ՝ համապատասխանաբար ինտերակտիվ և ավանդական եղանակներով.....15

Եզրակացություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք, արդի կրթական համակարգը սահմանում է նոր կարողունակությունների համակարգ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների համար: Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում օտար լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ: Սովորողի համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և՛ սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և՛ ուսուցչի մասնագիտական որակները:

Ռուսաց լեզվի ուսուցման շրջանակներումն սովորողը պետք է լինի դասապրոցեսի գործընկերային կողմ: Իրականում օտար լեզուն մուտք է գործում սովորողի լեզվամտածողության մեջ թե՛ լսելու, թե՛ խոսելու ու հաղորդակցվելու ճանապարհով: Ուստի ավանդական դասին բազմանդամ դասարաններում խոսքի հնարավորություն տալով մի քանի սովորողի՝ նշանակում է ուսուցիչն ուղղակիորեն «զրկում է» մյուսներին խոսելու ու հաղորդակցվելու հնարավորությունից: Իսկ ահա ինտերակտիվ մեթոդական համակարգի ներդրումը մեծապես կարող է նպաստել սովորողների համընդհանուր մասնակցությանը դասին: Խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը թույլ կտա, որ դասարանում սովորողների մասնակցությունը լինի համաչափ, որևէ սովորող չմնա պարապ: Այս մոտեցումը, կարծում եմ, բավականին արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողների աշխատունակության ու առաջադիմության վրա:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ: Արդյունքում՝ նաև ռուսաց լեզվի դասին,

ուսումնական գործընթացին զուգահեռ, կարելի է զարգացնել սովորողների ստեղծագործական ու նախաձեռնողական ունակություններն ու թույլ տալ, որ վերջիններս լինեն հնարավորինս ինքնուրույն:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քանի որ դպրոցում ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար հիմնականում ստեղծում են որոշակի խնդիրներ, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ նոր տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգ լուծում է մի քանի հիմնախնդիրներ: Արդյունքում՝ սովորողն ինտեգրվում է դասի մեջ՝ զուգահեռ ձեռք բերելով ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծարար մտածողություն: Հենց այս արդյունքի դրական ելքով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողներ համագործակցային, նախաձեռնողական ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել դասի ընթացքին սովորողի ներգրավվածությունը, վերջինիս նախաձեռնողական գործելաոճն ապահովելու համար ուսուցչի կողմից կատարելիք քայլերը, ինչպես նաև արդի կրթական նորարարությունների դերը այդ համատեքստում:

ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Լեզվական կարողությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական մտածողության, կարողությունների ձևավորումն ու զարգացումը մասնավորապես անգլերենի դասերին ևս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ: Սակայն, ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ բացառապես ուսուցչի ջանքերով հնարավոր չէ հաջողել: Այս համատեքստում կարևոր կլինի ասել, որ դասավանդման մի շարք հնարների, զանազան գործիքների կիրառումը ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս ամենը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձեևավորմանը: Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային

կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[1]:

Դպրոցականների համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ: Պակաս կարևոր չէ չկաշկանդել վերջիններիս ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող ոչ հավաստի ու մտացածին խոսքը, քանի որ ցանկացած միտք պետք է հնչի, որպեսզի կյանքի այդ կարևոր փուլում սովորողը ստանա բոլոր անհայտների պատասխանները: Հարկավոր է թույլ տալ, որ դպրոցականը իր մեջ կուտակված ֆանտազիաները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ նա ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ, առանց վախերի հաղորդակցվում օտար լեզվով:

Ինչպես արդեն նշեցինք, դպրոցականին ցանկացած գործունեության ժամանակ անհրաժեշտ է քաջալերել նրա արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ ազատ, անկաշկան խոսելու, ինչը արդյունավետ կերպով կարող է նպաստել խոսքային հնարավորությունների ընդլայնմանը: Որքան մեծ է սովորողի արտահայտվելու և խոսելու ցանկությունը, այնքան արագ է մշակվում և հղկվում խոսքը: Ռուսերենի դասավանդման ընթացքում կարևոր է նաև սովորողների մոտ ձևավորել լսելու կարողություններ: Քերականորեն ճիշտ կառուցված, ոչ բարդ բառային պաշար պարունակող, ականջահաճո խոսք լսելը կարող է նպաստել օտար լեզվի արտահայտչամիջոցների ընկալմանը: Նմանօրինակ խոսքը կարևորագույն գործիքն է, որը կարելի է ուղղել ի շահ երեխայի:

Այս առումով շատ մեծ ու կարևոր է նաև նողի դերակատարումը: Տանը, բակում, շփումների ժամանակ, արտաքին այլ ազդակների հետ շփման, ՏՀՏ տեխնոլոգիաներից օգտվելիս շատ կարևոր է, որ երեխան լսի ընդօրինակելի խոսք: Պետք է նկատել, որ երեխաներն արագ են ընկալում ցանկացած տեղեկատվություն, ուստի անորակ ու սխալ բառամթերքն ու արտահայտչամիջոցները միմյայն բացասական ազդեցություն են ունենալու սովորողի՝ նոր ձևավորվող խոսքի վրա:

Երեխայի ընկալումների առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային հոգեբան Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է

[1] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

ընթանում ուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով, և ունի իր ներքին տրամաբանությունը»[2]: Տեղին կլինի ընդգծել, որ սովորողը որոշակի բառի սխալ արտաբերման ընթացքում հարմարվում է, ընկալում այն որպես իրողություն, մինչդեռ հետագայում սխալ իմացության շտկումն էլ ավելի բարդ է, քան նոր բառի ուսուցումը: Այս համատեքստում է, որ էլ ավելի է կարևորվում ավելորդ բառամթերքի օգտագործման բացառումը օտար լեզվի դասավանդման ժամանակ:

Բանավոր խոսքի զարգացումը չի կարող առանձնացվել մտավոր զարգացումից: Անընդհատ մտավոր գործունեություն կատարող սովորողի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Պետք է պայմաններ ստեղծել խոսքի առաջացման համար, ինչպես նաև խոսքի ուսուցման գործընթացում հարկավոր է խոսքի պլանավորված հերթականությամբ առաջ գնալ: Կարևոր է պայմաններ ստեղծել սովորողների խոսքի մոտիվացիայի համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի մոտիվացիայի առկայությունը նշանակում է, որ երեխան ունի ներքին մոտիվացիաարտահայտել իրմտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում[3]: Բառապաշարում արտացոլվում է խոսքի բովանդակությունը: Բառերը ցույց են տալիս առարկաներ, երևույթներ, նրանց միջև գոյություն ունեցող կապեր, գործողություններ, առարկաների որակներ, հատկանիշներ:

Սովորողների ինքնուրույնությանը մեծապես նպաստում են ինտերակտիվ մեթոդները: Խոսենք ինտերկտիվ ուսուցման և փոխգործուն մեթոդական համակարգի սկզբունքների մասին: Ինտերկտիվ ուսուցումը ենթադրում է շարժուն ու համագործակցային դասերի իրականացում, որտեղ սովորողը չի սպասում, որ ուսուցիչն իրեն դաս բացատրի: Այս պարագայում նույնիսկ նոր նյութի հաղորդման ժամանակ ակնկալվում է սովորողի ուղիղ մասնակցությունը: Սովորողներն ու ուսուցիչը համագործակցում են, որևէ փոխգործուն մեթոդով սովորում նոր դասի կարևոր հասկացությունները, կանոնների հիման վրա բերում են օրինակներ, զանազան աղյուսակների ու դիագրամների օգնությամբ մատնանշում

[2]Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934, էջ 31

[3]В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», էջ 12:

նմանություններն ու տարբերությունները: Ինտերկտիվ մեթոդների կիրառումը դասին կատարում է երկու կարևոր գործառույթ.

- ***նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը.***
- ***խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:***

Ինտերկտիվ մեթոդները նպաստում են սովորողների մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել:

Ուսուցման ինտերկտիվ մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին:

Աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներն են.

- փոխուսուցումը, համագործակցություն.
- ակտիվությունը.
- կարծիքի, դիրքորոշման, ցանկության անկաշկանդ արտահայտում.
- դասին սովորողների համաչափ մասնակցություն:

Ինտերկտիվ մեթոդների առանձնահատկություններն են.

- սովորողների համար գիտելիքաստեղծ միջավայրի ապահովումը.
- հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը.
- կոլեկտիվ մտածողության ձևավորումը.
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը, խոսքայի կարողությունների ձևավորումը.
- ստեղծագործական մտածողության զարգացումը.
- ինքնուրույն գործելու կարողության խրախուսումը.
- վերլուծական կարողությունների ձևավորումը:

Ինտերկտիվ մեթոդների արդյունավետ կիրառման համար յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է: Ընդ որում՝ նա կարող է հանգիստ դրանք փոփոխության ենթարկել՝հարմարեցնելով դասարանի պահանջներին: չկան: Մեթոդի ցանկացած կիրառում եզակի է և անկրկնելի: Կարող ենք պնդել, որ ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Անդրադառնանք դասավանդման ինտերակտիվ մի շարք մեթոդների, որոնց օգնությամբ կարելի է խթանել դպրոցականի խոսքային կարողությունը, պատկերավոր ու ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունն ու քերականական գիտելիքների հաղորդումը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում: Օրինակ՝ սովորողներին կարելի է հանձնարարել խմբեր կազմել և տրված գոյականներով պատմություն հորինել, կամ տրված տեքստից երկսյուն աղյուսակում դուրս գրել եզակի ու հոգնակի գոյականները, գտնել դրանց տրվող հարցերը: Նմանօրինակ հանձնարարություններ օգնությամբ սովորողները գործնականում կիրառում են իրենց բառային պաշարն, ինչպես նաև ձեռք են բերում երկխոսելու հմտություններ: Այստեղ շեշտը դրվում է համատեղ գործունեության վրա, որի ընթացքում առաջանում են իրադրությունների, գործողությունների քննարկման խնդիրներ: Ռուսաց լեզվի դասի ընթացքում սովորողների համատեղ գործունեությունը օգնում է երկխոսության հմտություններ զարգացնել:

Ինտերկտիվ մեթոդների կիրառման ընթացքում սովորողների շփման մշակույթը զարգացնելու նպատակով արդյունավետ է կիրառել խաղային իրավիճակների, տարբեր բովանդակության գեղարվեստական ստեղծագործությունների բեմականացումների և զրույցների մեթոդը: Զարգացման նպատակով կարևորվում է նաև երկխոսություն պարունակող շարժախաղերի դերը: Նմանօրինակ եղանակներով ամրապնդվում է խոսքը զրուցակցին ուղղելու ունակությունը, որևէ գործողություն իրականացնելուց առաջ խաղընկերոջ ասածների շուրջ մտածելու, հարցերը ճիշտ ձևակերպելու, պատասխանելու և այլ հմտություններ:

Բավականին արդյունավետ մեթոդ է զրույցը, որը բանավոր խոսքի զարգացման գործնական միջոցներից է: Ուսուցիչը պետք է անպայման տիրապետի զրույցը կազմակերպելու արվեստին: Զրույցի թեման այնպես պետք է ընտրվի, զրույցն այնպես պետք է կառուցվի, որ սովորողները կարողանան հետևել թեմայի զարգացման տրամաբանական ընթացքին: Սա շրջակա միջավայրին ծանոթացման, ինչպես նաև կապակցվան խոսքի զարգացման միջոց է: Շատ կարևոր է զրույցի նշանակությունը: Այն նպաստում է դպրոցականի մտածողության զարգացմանը, օգնում է իմաստավորելու սեփական փորձը, ճիշտ ձևակերպելու միտքը, ինչպես նաև լսել և հասկանալ ուրիշի խոսքը: Ինտերակտիվ մեթոդամանկավարժական հնարներից ռուսաց լեզվի դասաժամին կարելի է կիրառել.

- ✓ ԳՈՒՍ.
- ✓ Տ-աձև աղյուսակ.
- ✓ Մ-աձև աղյուսակ.

- ✓ Շրջագայություն անցած թեմաների էջերով.
- ✓ Ձնագնդի:

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը: Ինտերակտիվ մեթոդների կիրառումը թույլ կտա գրանցել հետևյալ արդյունքները՝

- ռուսաց լեզվով հաղորդակցվելու հմտություն.
- թիմային աշխատանքում պատասխանատու լինելու գիտակցում.
- ինքնուրույնություն.
- նախաձեռնողականություն.
- անսպասելի իրավիճակում կողմնորոշվելու կարողություն.
- համացանցային հարթակում կողմնորոշվելու, համապատասխան տեղեկատվությունը համակարգելու կարողություն.
- փոխգործակցելու կարողություն.
- աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու հմտություն.
- թիմում աշխատելու կարողություն:

Որպեսզի կիրառվող մեթոդական շղթան տա դրական արդյունք, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ բերել վերջինիս դեպի դասը: Հայտնի է, որ տեսողությունը համարվում է հիմնական զգայարաններից մեկը, որը մարդուն տալիս է շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության 90%-ը, և իհարկե տեսողական համակարգը համարվում է ամենաբարդը մյուս զգայարանների համեմատ: Նախ, տեսողական օրգանը ոչ միայն վերարտադրում է առարկան, այն միաժամանակ հաղորդում է բազմաթիվ առնչվող տվյալներ, օրինակ՝ չափը, գույնը, գտնվելու վայրը, հեռավորությունը, սա հենց գործընթացի գործողությունն է: Այնուհետեւ բոլոր տվյալները աղավաղումներով ու սխալներով փոխանցվում են ուղեղին, որոնք ուղեղն ուղղում կամ լրացնում է արդեն հասանելի տեղեկատվության օգնությամբ[4]: Հաշվի առնելով վերը նշված պնդումը՝ բավականին կարևոր են դիդակտիկ նյութերն ու ուսումնաօժանդակ պարագաները: Ռուսաց լեզվի ուսուցման շրջանակներում կարելի է օգտագործել զանազան պարագաներ: Շատ դեպքերում դրանք կարող են պատրաստել հենց սովորողները, որն էլ լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

[4] https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html / հոգեբանական պորտալ/

Ակտիվացնելով սովորողների տեսաղական զգայարանը՝ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, նախապատրաստում վերջինիս դասին: Ռուսաց լեզվի ուսուցիչը, ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարող է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին:

Ուսուցչի համար անչափ կարևոր է, որ մեթոդական աշխատանքը (ուսուցման բովանդակությունն ու ձևերը) կատարվի տրամաբանորեն հիմնավորված, և նյութի մատուցման ձևը համապատասխանի բովանդակությանը: Լեզու դասավանդողի կարևորագույն խնդիրներից են՝ ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը: Անչափ կարևոր է նաև դասավանդման գործընթացում հավի նառնել յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները, նրա օժտվածությունն ու դրա բացակայությունը: Ուսուցչի մանկավարժական գործունեության սկզբունքներից է սովորողի ուսուցման, դաստիարակության եւ զարգացման նկատմամբ անհատական նպատակաուղղված մոտեցում[5]: Այդ տեսանկյունից կարևորում ենք առարկայական մեթոդմիավորման աշխատանքը, որը կոչված է կատարելագործելու դասավանդման որակը՝ ապահովելու նոր մեթոդական ձևեր ու միջոցներ, ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման համար ստեղծել պայմաններ, օգտագործել ռուսաց լեզվի դասերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման համար և այլն:

Այսպիսով, փոխգործուն մեթոդները, աշակերտակենտրոն ուսուցումը, մանկավարժական նոր ու արդիական մոտեցումները ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում կարող են լուծել մի շարք մանկավարժական խնդիրներ և նպաստել սովորողների առաջադիմությանն ու աշխատունակության բարձրացմանը: Ուստի և կարևոր ենք համարում ուսուցչի ինքնակրթվելու, զարգանալու, նոր գիտելիքներ ու կարողունակություններ ձեռք բերելու ցանկությունները:

[5] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝որպես ուսուցչի առաջնային նպատակ

Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին , դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Սա բավականին բարդ գործընթաց է: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակի: Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Սովորողի հաջողությունները, առաջադիմությունը ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի: Սակայնկարևոր է, նաև որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Այս պարագայում խնդիրը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[6]: Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրեն ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը:

Այստեղ լուծումը մեկն է. նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում կարող են սովորողների ուշադրությունը սևեռել դեպի դասապրոցես: Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակ համացանցային հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով:

Այս առումով հետաքրքիր է ուսուցման նախագծային մեթոդը, որը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Մեթոդի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է :

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Ռեֆլեկտիվ հմտություններ.
- Որոնողական, հետազոտական հմտություններ.
- Համագործակցային հմտություններ.
- Կառավարման կարողություններ, հմտություններ.
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ.
- Ներկայացման հմտություններ:

Օրինակ՝ միջին և ավագ դպրոցում դպրոցում ռուսաց լեզվի դասաժամին կարելի է իրականացնել նախագծային ուսուցում, ինչը կնպաստի սովորողների մոտ խասքային կարողության զարգացմանը: Աշխատանքի համար խնդիր դնելով

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք

լեզվակրի հետ շփումը, հարցազրույցը, հետազատական աշխատանքի կամ ճանաչողակն հոլովակի պատրաստումը՝սովորողի մոտ կարող է ավելի խորանալ հետաքրքրությունը օտար լեզվի նկատմամբ, իսկ շփման ժամանակ ճիշտ բառամթերքի օգտագործումը, հնչյունների ճիշտ արտաբերումը, անշուշտ, կնպաստի սովորողի լեզվամտածողության և ակտիվ բառապաշարի զարգացմանը: Արձանագրենք այսօրինակ նախագծային աշխատանքի արդյունքում սովորողի ձեռքբերումները.

- սովորողը հաղթահարեց ռուսաց լեզվով տվյալ լեզվի կրողի հետ շփման ընթացքում հնարավոր վախերն ու բարդույթները.
- պասիվ բառապաշարից ակտիվ բառապաշար տեղափոխվեցին նոր բառեր,
- հարստացավ բառային պաշարը.
- սովորողը կարևորեց օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը / եթե դժվարացավ շփման մեջ/.
- սովորեց նոր հասկացություններ.
- զրուցեց ռուսերենով իրեն հետաքրքրող թեմաներից.
- ինքնուրույն ձևակերպեց հարցադրումներ.
- աշխատանքին մոտեցավ ստեղծագործաբար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս սովորողը հնարավորություն ունեցավ համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների սեռատարիքային առանձնահատկությունները:

Կարծում ենք, որ սովորողի սովորելու մոտիվացիան մեծապես կախված է հենց ուսուցչից, որքան ուսուցիչը խրախուսի, ցույց տա, թե որն է օտար լեզու իմանալու անհրաժեշտությունը, դա հիմնավորի փաստերով, այնքան սովորողը կգա դեպի առարկան, բաց կլինի համագործակցության համար:

ԳԼՈՒԽ 2 ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 «Имя существительное» թեմայի ուսուցումը 5-րդ «ա» և 5-րդ «բ» դասարաններում ՝ համապատասխանաբար ինտերակտիվ և ավանդական եղանակներով

Սույն հետազոտական աշխատանքն ուղղված է ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում հանդիպող կոնկրետ ուսումնական, մանկավարժական խնդիրների վերլուծությանն ու այդ խնդիրների վերաբերյալ հնարավոր լուծումների քննարկմանը: Աշխատանքի առաջին գլխում խոսվեց միջին դպրոցում «Ռուսաց լեզու» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ինքնուրույնության ձևավորման մասին: Այդ խնդիրների շարքում առանձնացվեց սովորողների խոսքային կարողության, պատկերավոր մտածողության, բառապաշարի հարստացմանն ուղղված ուսուցչի մոտեցումները, ինչպես նաև դասավանդման ընթացքում սովորողների արժեքային համակարգի ձևավորման, լեզվամտածողության զարգացման ու ինքնուրույնության խթանման հիմնախնդիրները:

Նպատակների սահմանումը կրթական գործընթացի կարևոր փուլն է համարվում, որից էլ կախված է ուսումնական ընթացքի բնականոն ու հաջող առաջընթացը: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է կազմակերպչական ընթացքի լավագույն տարբերակի ընտրությամբ, կրթության բովանդակության, մեթոդների, միջոցների, ուսուցման ձևերի նպատակային համադրմամբ: Շատ կարևոր է, որ դասի պլանավորման փուլում հաշվի առնվեն սովորողի պահանջմունքները, ճանաչողական կարողությունները, նպատակ դրվի սովորողների համար ինքնուրույն գործելու հնարավորություններն ընդլանել, ստեղծել վերջիններիս նորարարական գաղափարներն ու ներուժը գործի դնելու համար:

Ստորև կներկայացնենք մեր մանկավարժական պրակտիկայում ինտերակտիվ և ավանդական դասի կիրառության արդյուքում կատարած եզրահանգումները: Համեմատության մեջ դնելով երկու տարբեր մոտեցումներ՝ կհիմնավորենք վերը կատարած մեր պնդումներն առ այն , որ ինտերակտիվ ուսուցումն ունի բազմաթիվ հնարավորություններ դասի ժամանակ սովորողների ակտիվությունը բարձրացնելու տեսանկյունից:

«Имя существительное» թեմայի ուսուցումը: 5-րդ դասարանում

5-րդ «ա» դասարան-ավանդական դաս

5-րդ «բ» դասարան- ինտերակտիվ դաս

Սովորողը մայրենիից արդեն իսկ ծանոթ է գոյականին, ուստի ռուսաց լեզվի շրջանակներում թեմայի ուսուցումն ինչ-որ առումով կարող է թվալ դյուրին: Այդուհանդերձ յուրաքանչյուր լեզու ունի իր ձևավբանական առանձնահատկությունները, ուստի և չի կարելի ասել, որ թեման կարող է հեշտ ընկալվել: 5-րդ «ա» դասարանում ինտերակտիվ մեթոդական համակարգով պլանավորած դասին ստեղծեցինք սովորողների համագործակցությունը խթանող մի շարք իրավիճակներ:

Սովորողներն աշխատեցին փոքր խմբերով հետևյալ առաջադրանքի շուրջ:

Названия вещей	**Названия лиц**	**Названия веществ**	**Названия живых существ**

Խմբի անդամները, միմյանց օգնելով, լրացրին աղնուսակն ու ներկայացրին: Արդյունքում՝ ողջ դասարանն ակտիվ էր: Հաջորդ աշխատանքը զույգերով էր: Աշխատանքի ավարտին՝ զույգերը կատարեցին փոխադարձ ստուգում՝ համագործակցելով միմյանց հետ: Առաջադրանքը հետևյալն էր՝

Т-ձև աղյուսակի միջոցով կազմել տրված բառերի հոգնակի թիվը:

Единственное число	**Множественное число**
Ослик, зима, робот, ресторан, витрина	

Գոյականի թվային կարգի ուսուցման շրջանակներում կիրառեցինք «Խճանկար» մեթոդը: 20 սովորողից բաղկացած դասարանը բաժանվեց 4 խմբի և յուրաքանչյուր խմբում նշանակվեց ավագ: Սովորողներին բաժանվեց գոյականի թվի վերաբերյալ կանոններով թերթիկներ: Յուրաքանչյուր խմբի ավագ առաջադրանքի կատարման ընթացքում հսկում էր, որ իր թիմում կատարվի քննարկում, սովորողները վերլուծեն կանոնները, հասկանան ու բերեն օրինակներ:

5-րդ «ա» դասարանում աշխատանքի ավարտին ունեցանք հետևյալ վերջնարդյունքները՝

- Սովորողները ուսուցանվող նյութը կուսումնասիրեն ինքնուրույն, կսովորեն միմյանց օգնելով աշխատել, նրանց մոտ կձևավորվի կոլեկտիվ մտածողություն:
- Աշխատանքի գործնական հատվածում կսովորեն տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները համադրել:
- Սովորողները իրենց սովորածը կսովորեցնեն միմյանց, կամբողջացնեն գիտելիքները միասին:

Կիրառված փոխգործուն մեթոդի առավելություններն են՝

- Սովորողի կողմից ուսուցանվող նյութի ինքնուրույն ուսումնասիրություն,
- խմբային աշխատանքի միջոցով դասընկերների հետ համագործակցային հարաբերությունների հաստատում:
- Ուսուցանվող նյութի հեշտ ընկալում:
- Ուշադրության և պատասխանատվության զարգացում:
- Սովորել սովորեցնելով կարողունակության ձևավորում:
- Ժամանակի արդյունավետ օգտագործում:
- Հաշվետու լինելու կարողության ձևավորում:
- Նյութի ներկայացման բազմապիսի ձևերի հնարավորություն, ինչն կարող է կրկնության բազմաթիվ հնարավորություններ ընձեռել:
- Մոտիվացիայի բարձրացում, հետաքրքրությունների բավարարում:

Իսկ ահա 5-րդ «բ» դասարանում դասը պլանավորել էին ավանդական եղանակով: Սովորողները կարդացին տեսքստը, ապա հանձնարարվեց դուրս գրել գոյականները: Կային սովորողներ, ովքեր դժվարացան և փորձեցին արտագրել դասընկերներից: Հաջորդ աշխատանքն իրականացվեց գրատախտակի մոտ: Սովորողները հերթով մոտեցան և տրված եզակի գոյականը գրեցին հոգնակի թվով: Այստեղ ևս առաջադիմող սովորողները կատարեցին առաջադրանքը գերազանց, ավելի թույլերը ուղղակի մեխանիկորեն արտագրեցին:

Այսպիսով կարող ենք փաստել որ երկու դասարաններում նույն թեմայի ուսուցումը տասի տարբեր մոտեցումներով ապացուցեց, որ խմբային աշխատանքները, ինտերակտիվ մոտեցումները մոտիվացնում ու շահագրգռում են սովորողներին, ուստի հակված ենք պնդել, որ ավանդական դասն այլևս չի կարող ապահովել համարչափ ուսուցում: Ավանդական մոտեցումները չեն կարող սովորողների ակտիվությունն ապահովել ողջ դասի ընթացքում, սովորողը չի կարող

ինքնուրույն ու նախաձեռնող լինել: Ուստի և մեր մանկավարժական գործունեության ընթացքում փորձում ենք հանդես գալ որպես նորարար, կիրառել նոր մեթոդներ ու գործիքներ, որպեսզի սովորողին սիրել տանք ռուսաց լեզուն և ապահովենք կրթական պետական չափորոշչով առարկայի համար սահմանված վերջնարդյունքները համաչափ և արդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև:

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ: Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը: Զանազան մեթոդների կիրառությունը, ակտիվ, գործուն դասերի, խմբային ու գործնական աշխատանքների իրականացումը, միջառարկայական կապերի ստեղծումը, միակ արդյունավետ եղանակներն են հաջողության հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում:
2. Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934, էջ 31:
3. В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей
4. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
5. https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html / հոգեբանական պորտալ/: http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»: